ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏՖԱՆՕ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 52 - 53 (16350) ՇԱԲԱԹ, 25 ՀՈՒԼԻՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵՏՐԻ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Հուլիսի 20-ին պաշտոնական այցով Թբիլիսի ժամանեց Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը: Այցի շրջանակներում Եվրամիության ներկայացուցիչը հանդիպումներ ունեցրավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու, երկրի խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցիչների հետ:

Գիորգի Մարգվելաշվիլին եւ Դոնալդ Տուսկը առանձնազրույցից հետո բանակցությունները շարունակեցին ընդլայնված կազմով: Կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցության առաջնահերթությունները, ասոցիացման համաձայնագրի կատարման գործընթացը, ընդգծեցին այդ ուղղությամբ երկկողմ ջանքերի նշանակությունը:

Նախագահը խոսեց նաեւ Ռիգայի սամիթի արդյունքների մասին: Նշվեց, որ Եվրամիության հետ անայցեգրային պայմանագրային հաստատումը կարեւոր նշանակություն ունի Վրաստանի քաղաքացիների

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՎԱՂԸ ԿԿԱՅԱՆԱ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԲԱՑՈՒՄԸ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ԱՅԼ ՀՅՈՒՐԵՐԻ ԹՎՈՒՄ ԲԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱ ԿԼԻՆԻ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

Վաղը՝ հուլիսի 26-ին, Թբիլիսիում տեղի կունենա եվրոպական երիտասարդական 13-րդ օլիմպիական «Թբիլիսի-2015» փառատոնի հանդիսավոր բացումը: «Թբիլիսի-2015» եվրոպական երիտասարդական օլիմպիական 13-րդ փառատոնը կանցկացվի հուլիսի 26-ից մինչեւ օգոստոսի 1-ը: Վրաստանի մայրաքաղաք կժամանեն 50 երկրների շուրջ 4 հազար մասնակիցներ: Վաղը, փառատոնի բացմանը սպասվում է շուրջ հինգ տասնյակ երկրների պետական ու կառավարական բարձրաստիճան պատվիրակություններ, այդ թվում Հայաստանի պատվիրակությունը վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ:

Հուլիսի 20-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, հանդիսավոր պայմաններում բացեց եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոն «Թբիլիսի-2015»-ի «Օլիմպիական ավանը»:

Ելույթ ունենալով արարողությանը, Վրաստանի վարչապետը հայտարարեց. «Մենք բոլորս անհամբերությամբ սպասում ենք օլիմպիական փառատոնին: Մինչ այդ կարեւոր միջոցառմանը մի քանի օր է մնացել: Թբիլիսիում արդեն վառվում է Օլիմպիական կրակը:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՀՍՏԱԿԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏՎԵՑ

Հուլիսի 17-ին Վրաստանի խորհրդարանը՝ 78 կողմ եւ 18 դեմ ձայներով հաստատեց երկրի 2015 թվականի հստակեցված բյուջեի նախագիծը: Օրինանախագիծը մերժեցին խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցիչները:

Բյուջեի նոր նախագծում կանխագծված տնտեսական աճը 5 տոկոսից նվազեցվել է մինչեւ 2 տոկոս: Հարկային մուտքերի նախագիծը նվազեցված է 200 միլիոն լարիով, իսկ ծախսի հատվածը՝ 140 միլիոնով: Նախարարություններին հատկացվող գումարը նվազեցվել է 70 միլիոնով: Նույնքան նվազեցվել է նաեւ դոնորների կողմից նախագծերի ֆինանսավորումը: Միաժամանակ, ավելացվել է արտաքին պարտքի սպասարկման գումարը:

Ինչպես տեղեկացրին կառավարությունից, բյուջետային կրճատումները սոցիալական ծախսերին չեն առնչվում:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵԹԵ ՍԱԿԱԳԻՆՆ ԱՎԵԼԱՑՎԻ, ԱՊԱ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆՊԱՇՏՊԱՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԸ ԿՍՏԱՆԱՆ ՆՊԱՍՏ»

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ԿԱՎԵԼԱՑՎԻ

Էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը որոշում է ընդունել՝ ընթացիկ տարվա օգոստոսի 1-ից էլեկտրաէներգիայի սպառողական սակագինն ավելացնել 3,95 թեթրիով: Սակագնի բարձրացումն առնչվում է «Էներգո Պրո Ջորջիա» ընկերության աբոնենտներին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին՝ խոսելով էլեկտրաէներգիայի սպառողական սակագնի հնարավոր բարձրացման հարցի շուրջ, նշեց, որ պետական նպաստ կտրվի միայն սոցիալապես անպաշտպան ընտանիքներին: Նա երկրի ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարներին հանձնարարեց ներկայացնել բնակչության նպաստների հատկացման ծրագիրը:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ ԹԲԻԼԻՍԻ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հրավերով, հուլիսի 25-ին, եռօրյա աշխատանքային այցով Թբիլիսի կժամանի Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Նույն օրվա երեկոյան Հայաստանի վարչապետը կդիտի Թբիլիսյան ծովի մերձակայքում եվրոպական երիտասարդական օլիմպիական «Թբիլիսի 2015» փառատոնի նորակառույց «Օլիմպիական ավանը»: Ապա Հովիկ Աբրահամյանը ուղեկցող անձանց հետ կուղեւորվի Բաթումի եւ ներկա կգտնվի միջազգային «Ջազ-փառատոն 2015»-ի բացմանը:

Հուլիսի 26-ին Հայաստանի վարչապետը կայցելի Լարս-Կազբեգի սահմանային անցակետ եւ կծանոթանա մաքսատան աշխատանքների դրվածքի հետ:

Երեկոյան Հայաստանի վարչապետը կմասնակցի եվրոպական երիտասարդական 13-րդ օլիմպիական փառատոնի բացման հանդիսավոր արարողությանը:

Հովիկ Աբրահամյանը եւ նրա գլխավորած պատվիրակությունը հուլիսի 27-ին կվերադառնա Երեւան:

Սեփ. լրատվություն

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ ԿԱՅՑԵԼԻ ԹԲԻԼԻՍԻ

Վերջերս Վրաստանի աշխատանքի, առողջապահության, զբաղվածության եւ սոցիալական հարցերով նախարար Դավիթ Սերգեենկոյի եւ Վրաստանում Հայաստանի դեսպան Յուրի Վարդանյանի հանդիպմանը պայմանավորվածություն ձեռքբերվեց Հայաստանի առողջապահության նախարարի՝ Վրաստան այցելելու հարցով: Եվ ահա, Դավիթ Սերգեենկոյի հրավերով, հուլիսի 27-29-ին Հայաստանի առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը՝ պատվիրակության հետ կգտնվի Վրաստանում:

Եռօրյա այցի շրջանակներում Հայաստանի առողջապահության նախարարը բանակցություններ կվարի իր վրաց գործընկերոջ՝ Դավիթ Սերգեենկոյի հետ, կայցելի թբիլիսյան մի շարք բժշկական հաստատություններ, ապա կմեկնի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան, կլինի Ախալցիխեի եւ Ախալքալաքիի բժշկական կենտրոններում:

Սեփ. լրատվություն

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԸ ԴԱՐՁԱՎ 50 ՏԱՐԵԿԱՆ

Սրբազան հայր, «Վրաստան» թերթի խմբագրությունը ի սրտե շնորհավորում է Ձեր կեսդարյա հոբելյանը: Վիրահայոց թեմում Ձեր հոգեւոր գործունեության 13 տարվա ընթացքում Դուք արեցիք հնարավորը նոր թափ հաղորդելու Վրաստանի հայության հոգեւոր, կրթա-մշակութային կյանքին: Ձեր ջանքերով հիմնադրված «Հայարտուն» կենտրոնում հետեւողականությամբ են իրագործվում նաեւ հայ-վրաց բարեկամական, մշակութային կապերի ընդլայնմանն ու խորացմանը նվիրված միջոցառումները: Շատ բան է արված, սակայն համոզված ենք, անելիքներն ավելի շատ կլինեն՝ հանուն Հայ Եկեղեցու, հայ-վրացական եկեղեցական կապերի է՛լ ավելի ամրապնդման, հավատավոր մեր ժողովրդի, հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության: Ձեզ մաղթում ենք քաջառողջություն, անսպառ եռանդ, արեւշատություն: Աստված Ձեզ ապավեն:

«Վրաստան» թերթի խմբագրություն

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ԿԱՅԱԾԱՎ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԱՎԱՆԻ ԲԱԾՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Այսօր մենք հանդիսավորությամբ բացեցինք օլիմպիական ավանը, որտեղ կապրեն մեր հյուրերն ու փառատոնի մասնակիցները»: Վարչապետն ընդգծեց նաեւ, որ նման մասշտաբի մարզական միջոցառում Վրաստանը երբեք չի անցկացրել:

Վրաստանի վարչապետի կարգադրությամբ, «Օլիմպիական ավանի» ղեկավար է նշանակվել Վրաստանի ֆուտբոլի հավաքականի նախկին խաղացող Լեւան Կոբիաշվիլին:

Ավանը տեղակայված է Թբիլիսյան ծովի մոտակայքում եւ զբաղեցնում է 50 հազար քառակուսի մետր տարածք: Նախագծի շինարարությունն իրականացնում էր չինական «Խուալինգ գրուպպ» կորպորացիան: Համալիրը ներառում է 9 բնակարանային մասնաշենք, 5 աստղանի հյուրանոց, մարզական առողջարարական կենտրոն, ռեստորան եւ կանաչապատման գոտի: Փառատոնի օրերին «Օլիմպիական ավանում» ամեն օր կանցկացվեն զվարճալի տարբեր միջոցառումներ:

Հուլիսի 23-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Թբիլիսիի «Մզիուրի» զբոսբայգու մոտակայքում մասնակցեց միջազգային չափորոշիչներով կառուցված թենիսի խաղահրապարակի բացման արարողությանը: Նոր խաղահրապարակի բացումը «Թբիլիսի-2015» եվրոական երիտասարդական օլիմպիական փառատոնի շրջանակներում գործարկվող վերջին օբյեկտն էր:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԻ ԿՐԱԿԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հուլիսի 18-ին Օլիմպիական ջահը հասցվեց Թբիլիսիի Ազատության հրապարակ: Այսպիսով, Օլիմպիական ջահն ավարտեց իր ուղերթը Վրաստանի քաղաքներով եւ տարածաշրջաններով եւ հասցվեց Երիտասարդական օլիմպիական փառատոնի՝ «Թբիլիսի-2015»-ի անցկացման վայրը: Փառատոնը կմեկնարկի հուլիսի 26-ին:

Թբիլիսիի Ազատության հրապարակ ջահը հասցնելու արարողությանը ներկա Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին նշեց. «Ցանկանում եմ բոլորին շնորհավորել մայրաքաղաք Օլիմպիական կրակը հասցնելու կապակցությամբ: Առաջին հերթին, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեին եւ կոմիտեի նախագահ Լերի Խաբելովին: Ցանկանում եմ շնորհակալություն հայտնել քաղաքապետ Դավիթ Նարմանիային, փառատոնի կազմկոմիտեի նախագահ Ալեկո Ախվլեդիանուն: Առանձնակի ցանկանում եմ ողջունել մեր կամավորներին, որ երկու ամսվա ընթացքում նրանք Օլիմպիական կրակն անցկացրին ողջ Վրաստանով»,- հայտարարեց վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ՀԱՐԿԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԾԱՎԱԼՆ ԱՎԵԼԱԾԵԼ Է»

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, հանդես գալով մամլո ասուլիսում, հայտարարեց, որ գերատեսչությունը հուսով է, որ այս տարի կստանան այն եկամուտները, որոնց մասին խոսվել է բյուջեի հաստատված նախագծում: Ինչպես նշեց նախարարը, հարկային մուտքերը նվազեցվել են 200 միլիոն լարիով:

«Ցանկանում եմ նշել, որ այսօր, նախորդ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ, հարկային մուտքերի ծավալն ավելացել է շուրջ 15 տոկոսով: Միաժամանակ, հուսով ենք, որ այս տարի կստանանք այլ եկամուտներ»,- ընդգծեց նախարարը:

Անդրադառնալով 71 միլիոնով ներդրումային վարկերի նվազեցման մասին հարցին, Նոդար Խադուրին նշեց, որ վերոնշյալ գումարների իրացումն օբյեկտիվ պատճառներով չի կատարվում: «Դա պայմանավորված է նաեւ պետական գնումների մասին օրինագծի ընդունման ձգձգմամբ»,- հայտարարեց Խադուրին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՀՍՏԱԿԵՑՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏՎԵՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի խորհրդարանը երրորդ ընթերցմամբ ընդունեց նաեւ «Ազգային բանկի մասին» օրենքի փոփոխությունները:

Ընդունված փոփոխության համաձայն, բանկային հատվածի նկատմամբ պետական վերահսկողության նպատակով, Ազգային բանկին առընթեր ստեղծվում է հանրային իրավունքի իրավաբանական անձ ֆինանսական վերահսկողության գործակալություն: Այն գլխավորելու է գործակալության խորհուրդը: Սահմանվել է նաեւ գործակալության գործառույթներն ու գործողությունները:

ԸՆԴՈՒՆՎԵՑ «ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ»

Վրաստանի խորհրդարանը երրորդ եւ վերջնական ընթերցմամբ ընդունեց «Պետական լեզվի մասին» օրինանախագիծը: Ըստ խորհրդարանի կողմից ընդունված օրինանախագծի եւ երկրի Սահմանադրության համաձայն, Վրաստանի պետական լեզուն վրացերենն է, իսկ Աբխազիայում նաեւ՝ աբխազերենը: Պետությունն ապահովում է Վրաստանի ողջ տարածքում պետական լեզվի սահմանադրական կարգավիճակի պաշտպանությունն ու պետությունը մշտապես հոգում է վրաց լեզվի պահպանման ու ուսուցման հարցում, որպես պետական լեզվի կենսունակության նշանակալից պայմանի:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՎԱԽԹԱՆԳ ԳՈՄԵԼԱՈՒՐԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

Հուլիսի 22-ին Վրաստանի խորհրդարանը պետական անվտանգության գործակալության ղեկավարի պաշտոնում հաստատեց Վրաստանի ներքին գործերի գործող նախարար Վախթանգ Գոմելաուրու թեկնածությունը:

39-ամյա թեկնածուի օգտին քվեարկել է 83 պատգամավոր, դեմ՝ ոչ ոք: Գոմելաուրին վերոնշյալ պաշտոնում ընտրվել է վեցամյա ժամկետով: Նոր պաշտոնում Վախթանգ Գոմելաուրու հաստատումից հետո, երկրի ՆԳ նախարարի պաշտոնը մնացել է թափուր: Այդ պաշտոնի թեկնածուին ներկայացնելու է վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Հանդես գալով խորհրդարանում, Վախթանգ Գոմելաուրին հայտարարեց, որ գործակալության առաջնահերթություններից մեկը լինելու է երկրի տարածքում օտարերկրյա հատուկ ծառայությունների գործակալների բացահայտումն ու նրանց չեզոքացումը, կոռուպցիայի, ահաբեկչության դեմ պայքարը: Նրա հավաստմամբ, պետանվտանգության նորաստեղծ գործակալությունը չի լինելու այն գործելակերպի շարունակողը, որը հաստատված էր ոչ հեռավոր անցյալի անվտանգության ծառայության գործունեության մեջ:

ՅՈՒՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հրամանագրով՝ Յուրի Պետրոսյանը նշանակվել է Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական:

61-ամյա Յուրի Պետրոսյանը ծնվել է Երեւանում, ավարտել է Կիեւի Շեւչենկոյի անվան պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը, Երեւանի պետական համալսարանի ասպիրանտուրան: Գերազանց ավարտել է Մոսկվայի դիվանագիտական ակադեմիան:

Խորհրդային բանակում պարտադիր զինծառայությունն անցնելուց հետո, որպես դասախոս աշխատել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

1992 թվականից մինչ օրս աշխատում է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում: Աշխատել է Մոսկվայի, Ալմաաթայի, Թբիլիսիի, Վարշավայի հայաստանյան դեսպանություններում: Նշանակումից առաջ զբաղեցնում էր Հայաստանի ԱԳ նախարարության սահմանակից երկրների վարչության Վրաստանի բաժնի վարիչի պաշտոնը:

Տիրապետում է ռուսերեն, անգլերեն եւ գերմաներեն լեզուների:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

7,2 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈՅԻ ՎԱՐԿ՝ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՆ

Եվրամիությունը հաստատել է Հունաստանին 7,2 միլիարդ եվրոյի վարկի հատկացումը, որը պետք է օգնի այդ երկրին խուսափել դեֆոլտից՝ մինչեւ ֆինանսական օգնության երրորդ տրանշի հատկացումը: «Եվրամիության անդամ 28 երկրների կնքած համաձայնագիրը թույլ կտա Հունաստանին խուսափել անհապաղ դեֆոլտից»,- նշել է Եվրահանձնաժողովի փոխնախագահ Վալդիս Դոմբրովսկիսը՝ հավելելով, որ նշված գումարի փոխանցումը կատարվելու է գալիք երկուշաբթի: Հունաստանին հատկացվելիք վարկը թույլ կտա հունական կառավարությանը կատարել 3,5 մլրդ եվրոյի վճարում Եվրոպական կենտրոնական բանկի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի պարտքերի դիմաց: 812546

ԹՈՒՐՔԻԱ

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐՈՒՉՈՒՄ

Թուրքիայի Շանլըուրֆա (Ուրֆա) շրջանի Սուրուչ գավառում իրականացվել է ահաբեկչություն, որը խլել է 32 մարդու կյանք, իսկ վիրավորների թիվը հասել է 100-ի: Քոբանիին օգնություն տրամադրելու նպատակով Ստամբուլից Սուրուչ մեկնած Սոցիալիստ երիտասարդության ընկերակցության դաշնության շուրջ 150 անդամից բաղկացած խումբը Սուրուչում ելույթ է ունեցել, երբ գործի է դրվել պայթուցիկը: Պայթյունը որոտացել է անմիջապես մարդկանց շարքերում: Թուրքիայում շրջանառության մեջ է մտել տեղեկությունն այն մասին, որ, ամենայն հավանականությամբ, թուրք-սիրիական սահմանին գտնվող Սուրուչ գավառում իրականացված պայթյունի հեղինակը եղել է «Իրաքի եւ լեւանտի իսլամական պետություն» իսլամիստական կազմակերպության գաղափարներին հարող 18-ամյա մի աղջիկ:

ՄԱԿ

ԻՐԱՆ-«ՎԵՑՅԱԿ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն հաստատել է հուլիսի 14-ին Վիեննայում Իրանի եւ «վեցյակի» միջեւ կնքված համաձայնագիրը: Հաստատումից հետո գործողությունների ծրագիրը ստացավ միջազգային իրավունքի նորմի կարգավիճակ: Համաձայնությունը ենթադրում է, որ Իրանի միջուկային ծրագիրը կունենա որոշակի սահմանափակումներ, սակայն Իրանին կտրամադրվի ֆինանսական աջակցություն եւ կհանվեն միջազգային բոլոր պատժամիջոցները: Միաժամանակ, համաձայնագիրն ընդգծում է, որ եթե «վեցյակի» անդամ պետություններից որեւէ մեկը կասկածի, որ Իրանը խախտում է գործողությունների ծրագիրը, ապա կրկին կկիրառվեն միջազգային պատժամիջոցներ:

ԱՄՆ-ԿՈՒԲԱ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՑԻՆ

ԱՄՆ-ը եւ Կուբան հարաբերությունների նոր փուլն սկսում են Վաշինգտոնում եւ Հավանայում դեսպանությունների աշխատանքի վերականգնմամբ: Պետությունները վերսկսում են դիվանագիտական կապերը եւ անում են վերջին քայլը, որն անցյալում է թողնում փոխադարձ թշնամության եւ անվստահության կես դարը: Կուբայի մայրաքաղաքում Միացյալ Նահանգների ներկայացուցչության շենքին սպասում է ձեւափոխություն առանց որեւիցե պաշտոնական արարողության: Հավանայում շահերը ներկայացնող սեկցիան կանցնի դեսպանության կատեգորիայի՝ առանց ԱՄՆ-ի ազգային դրոշի բարձրացման: Այդ կարեւոր իրադարձությունը տեղի կունենա շուտով ԱՄՆ-ի պետքարտուղար Ջիմ Քերիի՝ Հավանա այցելելու ժամանակ: Ըստ որում՝ Քերիի այցի ստույգ ժամկետները չեն նշվում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՅԱՑԱՎ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՑԻԿԼԻ ԲԱՑՈՒՄԸ

Հուլիսի 22-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին մասնակցեց Գարդաբանիի ջերմաէլեկտրակայանի երկրում առաջին համակցված ցիկլի բացման արարողությանը:

Ինչպես հայտարարեց վարչապետը, դա 231 միլիոնանոց նախագիծն էր, որն իրականացվեց Վրաստանի գործընկերային հիմնադրամի ու նավթի եւ գազի կորպորացիայի ֆինանսական աջակցությամբ: «Կայանի հզորությունը 230 մեգավատտ է եւ այն տարեկան կմշակի 1,6 միլիարդ կիլովատտ-ժամ էլեկտրաէներգիա: Ցանկանում եմ նշել, որ երկրի էներգահամակարգում հիմնախնդիրների ծագման դեպքում, այս կայանը կարճ ժամանակամիջոցում կապահովի էներգահամակարգի անխափան մատակարարումը: Այն հագեցված է նորագույն տեխնոլոգիաներով, տուրբիններով: Կայանի շինարարությունն սկսվել էր անցյալ տարվա հունվարին ու ավարտվեց սահմանված ժամկետից երեք ամիս շուտ»,- հայտարարեց վարչապետը: Իրակլի Ղարիբաշվիլու հավաստմամբ, Գարդաբանիի ջերմաէլեկտրակայանը մեծ օգուտ կբերի երկրին եւ Վրաստանի էներգաանվտանգությունը կդարձնի առավել անկախ:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ԵՐԴՎՅԱԼ ԱՏԵՆԱԿԱԼՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱՑԱՀԱՅՏԵՑ ԹԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ»

Վրաստանի քրեական իրավունքի համակարգի բարեփոխման միջգերատեսչական խորհուրդն անցկացրեց հերթական նիստը, որը վարում էր արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

Նիստի մասնակիցների քննարկմանը ներկայացվեց երդվյալ ատենակալների ինստիտուտի բարեփոխման կապակցությամբ, Վրաստանի արդարադատության նախարարության կողմից մշակած օրինանախագիծը: «Վրաստանում երդվյալ ատենակալների դատարանը ցույց տվեց, որ գործնականում առկա են թերացումներ: Մենք ցանկանում ենք, որպեսզի երդվյալ ատենակալների առանձնացման կարգը լինի շատ ավելի դյուրացված ու արագացված: Բացի այդ, նշանակալից է, որպեսզի երդվյալ ատենակալների դատավճիռն ընկալելի լինի անմիջականորեն մեղադրյալի եւ հասարակության համար: Երբ մեղադրյալը դառնում է դատապարտյալ, նա հստակորեն պետք է հասկանա, թե ինչու համար է ճանաչվել մեղավոր: Մենք նաեւ ցանկանում ենք, որպեսզի դատավճռի բողոքարկումը երկրորդ ատյանում իրականացվի արհեստավարժ դատավորների կողմից:

Ինչ վերաբերում է հարցաքննության կարգին, ինչպես գիտեք, անչափահասների համար արդեն ներդրվել են նոր կանոններ, եւ դրանք ներկայումս ստուգվում են պիլոտային ընթացակարգով: Ինչ վերաբերում է չափահասներին, ապա, ցանկանում ենք հունվարի 1-ի համար՝ այդ ինստիտուտն էլ արդիականացնել»,- հայտարարեց արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

ՌԱԶՄԱԿԱՆ

ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ԲԱԶՄԱԶԳ «Agile Spirit 2015» ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի 19-ին Վրաստանի զինված ուժերի գլխավոր հրամանատար, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու եւ գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Վախթանգ Կապանաձեի ուղեկցությամբ, այցելեց Վազիանի ռազմակայան, որտեղ ծանոթացավ ՆԱՏՕ-ի բազմազգ «Agile Spirit 2015» զորվարժությունների ընթացքին:

Ալյանսի սույն զորավարժությունները, որոնց մասնակցում են գործընկեր պետությունների՝ ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ռումինիայի, Լիտվայի, Լատվիայի ներկայացուցիչները, անցկացվում են ՆԱՏՕ-Վրաստան էական փաթեթի շրջանակներում: Զորավարժություններին դիտորդի կարգավիճակով մասնակցում են նաեւ Հայաստանի եւ Մոլդովայի զինվորականները: Բազմազգ զորավարժություններն ընդգրկում էին շտաբային եւ դաշտային նախապատրաստություն եւ ավարտվեցին հուլիսի 22-ին: Զորավարժության շրջանակներում հիմնվել է բազմազգ բրիգադի շտաբ, որը հիմնականում համալրված է վրաց զինվորականներով:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԴՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻՆ

Հուլիսի 22-ին Բրյուսելում տեղի ունեցավ Վրաստան-ՆԱՏՕ հանձնաժողովի նիստը, որի ընթացքում ալյանսի անդամ երկրները դրական գնահատեցին կազմակերպությանն անդամակցության ուղու վրա Վրաստանի առաջընթացը:

Նիստի աշխատանքին մասնակցում էր Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին:

Բրյուսելում խորհրդարանի խոսնակը հանդիպում ունեցավ ալյանսի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշբոուի հետ: Կողմերը քննարկեցին ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման հեռանկարները, երկրում ընթացող գործընթացներն ու տարածաշրջանային անվտանգության հարցերը: Առանձնակի քննարկվեց Վրաստանի բռնազավթված տարածքների իրավիճակի հարցը:

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ

ՋՐԻ ՀԱՇՎԻՉՆԵՐԸ ԿՏԵՂԱԿԱՅՎԵՆ ԱՆՎՃԱՐ

Կենցաղային օգտագործման համար խմելու ջրի հաշվիչների անհատական մոնտաժումն ընկերության կողմից կիրականացվի անվճար: Համապատասխան փոփոխությունն արդեն կատարվել է «Խմելու ջրի մատուցման եւ օգտագործման մասին» օրենքում: Այդ մասին հաղորդել է Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը:

Մասնավորապես, կենցաղային սպառողների համար ջրի խողովակի տրամագիծը, որը չի գերազանցում 15 կիլոմետրը, հաշվարկման հանգույցը եւ հաշվիչը կտեղակայվեն անվճար: Նշենք, որ հաշվիչի արժեքը կազմում էր 10 լարի, որը աբոնենտը մուծում էր հաշվիչի մոնտաժումից հետո:

«Կենցաղային սպառողների համար հաշվիչներն անվճար են եւ դրա տեղակայման համար պատասխանատու ջրամատակարարման ընկերությունն է: Հանձնաժողովն աշխատում է խմելու ջրի մատուցման եւ օգտագործման կարգի փոփոխման շուրջ, ըստ որի՝ ընկերության համար կսահմանվի ժամկետ, որի ընթացքում այն իրականացնելու է հաշվիչների տեղադրումը»,- հայտարարեց ազգային կարգավորիչ հանձնաժողովի նախագահ Իրինա Միլորավան:

Ինչպես նշեցին հանձնաժողովում, մոտ ժամանակներս քաղաքացիները կկարողանան օգտվել նաեւ ջրամատակարարման այլ նորամուծություններից: Մասնավորապես, հանձնաժողովը մշակել է կոմերցիոն սպասարկման որակի կարգը, որի համաձայն, ջրի չծրագրված անջատումը կհասցվի նվազագույնի:

Նշենք, որ, ներկա դրությամբ, առանց ջրի հաշվիչի, սպառողի մեկ շնչի հաշվով, դուրս է գրվում 3,15 լարի, հաշվիչի առկայության դեպքում՝ մեկ խորանարդ մետրի վճարը կազմում է՝ 0,2655 լարի: Այդ գումարից մեկ խորանարդ մետր ջրի մատուցման սակագինը կազմում է 0,215 լարի, իսկ մեկ խորանարդ մետր ջրի անցկացման, մաքրման գինը՝ 0,051 լարի:



ՀՈՒԼԻՍԻ 23-Ը՝ ԱՌԱՋԻՆ ՎՐԱՑԱԿԱՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՕՐ

1999 թվականի հուլիսի 23-ին Վրաստանում առաջին անգամ տիեզերք դուրս բերվեց առաջին օբյեկտը: Երկրի համար դա պատմական նշանակալից իրադարձություն էր, երբ Վրաստանում պատրաստված 6,42 մետրանոց սարքավորումը հաղթահարելով երկրի ձգողականությունը, դուրս եկավ բաց տիեզերք: Պատմական իրադարձության կապակցությամբ, Վրաստանի նախագահի հրամանագրով, հուլիսի 23-ը հայտարարվել է առաջին վրացական տիեզերական օբյեկտի օր:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ

Հուլիսի 22-ին քիմիայի քննությամբ ավարտվեցին միասնական ազգային քննությունները: Ինչպես հայտարարեց քննությունների եւ գնահատման ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, քննություններին մասնակցել է շուրջ 40 հազար դիմորդ, ուսանողների դրամաշնորհային մրցույթին՝ ավելի քան 4 հազար ուսանող, ընդհանուր մագիստրոսի քննություններին մասնակցել է 12500 թեկնածու, իսկ գործող ուսուցիչների առարկայական քննություններին ավելին քան 17 հազար մանկավարժ:

«Դա ընթացիկ գործընթացի կարեւորագույն հատվածն էր, թեպետ առաջիկայում սպասվում է առավել պատասխանատու փուլ, քանի որ ընթացքի մեջ է ուղղումների գործընթացը: Դրանից հետո կսկսվի բողոքարկումների գործընթացը»,- նշեց Մայա Միմինոշվիլին:

ԴԻՏՈՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ՝ ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ԱԼՅԱՆՍՈՒՄ

Հուլիսի 20-ին Վրաստանը Խաղաղօվկիանոսյան ալյանսում ստացել է դիտորդի կարգավիճակ: Դա վավերացվել է Պերուում կազմակերպության 10-րդ գագաթաժողովի կողմից ընդունած հռչակագրում:

Խաղաղօվկիանոսյան ալյանսը տարածաշրջանային կազմակերպություն է, որը հիմնվել է Չիլիի, Կոլումբիայի, Մեքսիկայի եւ Պերուի կողմից եւ, որի նպատակն է տնտեսական ինտեգրումը եւ համագործակցությունը վերոնշյալ լատինական երկրների ու պետությունների ու առեւտրական կազմակերպությունների հետ:

ՃԱԼԿԱՅԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է

Վրաստանի տարածաշրջանային զարգացման նախարարությունը, «Միացյալ ջրամատակարարման ընկերությունը» եւ մունիցիպալային զարգացման հիմնադրամը՝ Եվրոպայի ներդրումային բանկի ֆինանսավորմամբ. սկսել են Ճալկայի ջրամատակարարման համակարգի վերանորոգումը: Նախագծի արժեքը կազմում է ավելի քան 3 միլիոն լարի: Նախագծի ավարտից հետո, շուրջ 1200 ընտանիքներ ապահովված կլինեն շուրջօրյա ջրամատակարարմամբ:

ՆԵՐՈՒՄ՝ 98 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգելաշվիլին ներում է շնորհել 98 բանտարկյալի: Այդ մասին հայտարարեց նախագահին առընթեր ներման հանձնաժողովի ղեկավար Զվիադ Քորիձեն: Նրա խոսքերով, 74 բանտարկյալներ ազատ են արձակվում, իսկ մյուսների պատժաժամկետը նվազեցվում է: 74 բանտարկյալի թվում մեկը կին է:

Ընդհանուր առմամբ, հանձնաժողովը քննարկել է 589 դիմում:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հպամար: Հանդիպման գլխավոր թեմաներից էր նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակը, մասնավորապես, Ծիթելուբանի եւ Օչոսանի գյուղերի մոտ, այսպես կոչված, «սահմանագծի» տեղափոխումը: Կողմերը կրկին հաստատեցին Սուխումիի եւ Ցխինվալիի հետ Մոսկվայի կնքած, այսպես կոչված, դաշնակցության եւ ինտեգրման պայմանագրի չճանաչման դիրքորոշումը:

Հանդիպման ավարտին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը հանդես եկան համատեղ մամլո ասուլիսում:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին վստահություն հայտնեց, որ Եվրախորհրդի նախագահի այցը նոր ազդակ կհաղորդի Վրաստանի եվրաինտեգրման գործընթացին:

Իր հերթին, Դոնալդ Տուսկը հայտարարեց. «Որպեսզի ԵՄ-ի հետ ունենա ոչ վիզային ռեժիմ, Վրաստանը պետք է կատարի մի շարք հավելյալ բարեփոխումներ: Խոսքն առաջին հերթին վերաբերում է այն բանին, որ Վրաստանն ակտիվ պայքար մղի կոռուպցիայի, մարդկանց թրաֆիքինգի եւ թմրանյութերի տարածման դեմ»,- նշեց Եվրախորհրդի նախագահը:Դոնալդ Տուսկի խոսքերով, Վրաստանը բարեփոխումների իրականացման տեսանկյունից հանդիսանում է «Արեւելյան գործընկերության» մասնակից երկրների շրջանում լիդեր, եւ այդ պատճառով Եվրամիությունը շատ ավելի ուշադրությամբ է վերաբերում Վրաստանին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի հանդիպմանը՝ կողմերը քննարկեցին եվրաինտեգրման գործընթացին առնչվող հարցեր: Հանդիպմանը նշվեց, որ, չնայած արտաքին մարտահրավերներին, Վրաստանն ընթանում է եվրաինտեգրման կուրսով: Վարչապետը Եվրախորհրդի նախագահին շնորհակալություն հայտնեց այցի համար, ինչը Եվրամիության կողմից Վրաստանին ցուցաբերած աջակցության ապացույցն է:

Հուլիսի 21-ին Եվրախորհրդի նախագահ Դոնալդ Տուսկն այցելեց հակամարտության գոտու սահմանային Խուրվալեթի գյուղի մոտակայքում գտնվող Նադարբազեւի գյուղը: Նա տեղում հանդիպում ունեցավ Եվրամիության դիտորդական առաքելության ներկայացուցիչների հետ, որոնք մանրամասն տեղեկատվություն հաղորդեցին ստեղծված իրավիճակի մասին:

ՎՐԱՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

ԳԻԱ ԿՈՐԿՈՏԱՇՎԻԼԻՆ ԵՎ ՄԵՐԱԲ ՇԱԹԻՐԻՇՎԻԼԻՆ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ԿԱՐՍԼՅԱՆԻՑ 50 ՀԱԶԱՐ ԴՈԼԱՐ ԵՆ ՊԱՀԱՆՋԵԼ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանը պատասխանում է այն մեղադրանքներին, որոնք իր եւ Նինոծմինդայից մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի դեմ վերջին ժամանակներս ներկայացվեցին «Վրացական առաքելության» եւ «Նոր իրականություն» շարժման լիդերներ Գիա Կորկոտաշվիլու եւ Մերաբ Շաթիրիշվիլու կողմից: Մասնավորապես, Շաթիրիշվիլին արտակարգ հրավիրված ճեպասուլիսում հայտարարեց, որ Նինոծմինդայում մրցույթները անցկացվում են խախտումներով, գումարները յուրացվել են, իսկ առանձին նախագծեր ընդհանրապես չեն իրականացվել: Ի պատասխան դրա, Նինոծմինդայի վարչության նախագահը, Tvfree-ին տված էքսկլյուզիվ հարցազրույցում սկանդալային հայտարարություն արեց: Վարչության նախագահն ասաց, որ Կորկոտաշվիլին եւ Շաթիրիշվիլին դիմել են իրեն՝ 50 հազար դոլարի դիմաց այս թեմաները չեն հրապարակի:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Նինոծմինդայի մունցիպալիտետի վարչության նախագահ Գագիկ Կարսլյանի հետ հարցազրույցը, որը տարածել է Tvfree-ի գործակալության կայքը եւ «Ալիա» թերթը:

- Պարոն Գագիկ, հարցազրույցի սկզբում, առաջին հերթին, ցանկանում եմ առաջադրել հարց, թե ենթակառույցային ի՞նչ նախագծեր են ծրագրված 2015 թվականին Նինոծմինդայի մունիցիպալիտետում եւ, ի՞նչ գումարներ են ծախսվելու այդ առումով 2015 թվականին:

- Շնորհակալություն, մեր մունիցիպալիտետով հետաքրքրվելու համար: Նախ, խոսեմ Տարածաշրջանային զարգացման ու ենթակառույցների նախարարությունից ստացված ֆինանսավորման մասին: Այս տարի նախարարությունից ստացանք 1 միլիոն 700 հազար: Այս գումարը ծախսվեց գյուղերի ճանապարհների ասֆալտապատման վրա: Կթվարկեմ այն գյուղերը, որտեղ ճանապարհներն ասֆալտապատվում են: Հեշտիա գյուղ տանող ճանապարհի վրա ծախսվելու է 500 հազար լարի, Գանձա գյուղում՝ 600 հազար եւ Սաթխա գյուղում՝ նույնպես 600 հազար լարի: Նաեւ գնել ենք աղբատար մեքենա՝ 147 հազար լարիով, Գանձա, Փոկա, Օջալար, Սաթխա գյուղերի համար 260 հազար լարի է հատկացվել ջրամատակարարման սիստեմի, վերանորոգման եւ շինարարության նպատակով: Տեղական բյուջեից 50 հազար գումար է հատկացվել Դավիթ Աղմաշենեբելու փողոցի մայթերի բարեկարգման վրա: Նաեւ իրականացվում է կոյուղու համակարգի շինարարության կարգավորումը: Դրա համար քաղաքում ծախսվելու է 200 հազար լարի: Նշեմ, որ անցյալ տարի այդ նպատակով մրցույթում հաղթանակած Թբիլիսիի «Լոջիստիկ» ընկերությունը իրականացնում էր աշխատանքները, բայց անբարենպաստ եղանակների պատճառով չկարողացավ լրիվությամբ իրականացնել ստանձնած պարտավորությունները: Ընկերության սննկացումից հետո անցկացվեցին նախագծհաշարկային աշխատանքներ, հայտարարվեց նոր մրցույթ 32300 լարի արժողությամբ: Մրցույթում 27700 լարիով հաղթեց «Էմկաո» ընկերությունը, որը մեկ ամսվա ընթացքում ավարտելու է շինարարությունը: Արարողությունների տների համար ծախսվել է 170 հազար լարի: Ջրամատակարարման տեսանկյունից լրացուցիչ առանձնացրել ենք եւս 165 հազար լարի: Վերոնշյալ գումարով Փոքր Խանչալի, Ջիգրաշեն, Դիլիֆ, Մեծ Գոնդուրա գյուղերում կարգավորվելու է խմելու ջրի հիմնախնդիրը:

Ներքին ճանապարհների խճապատման համար ծախսվել է 120 հազար լարի, մարզահրապարակների կառուցման համար՝ 90 հազար լարի: Մշակութային օբյեկտների վերանորոգման եւ շինարարության վրա ծախսվել է 200 հազար լարի: Դրսի լուսավորության համար նախատեսված է 120 հազար լարի, իսկ 543 հազար լարին ստացել ենք գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում: Եվս շատ փոքր նախագծեր ունենք իրականացնելու: Նախագծերի ցանկն ու դրանց թվարկումը հեռու կտանի:

Ընդհանուր առմամբ, տեղական բյուջեից նախագծերի իրականացման համար հատկացվել է 1 միլիոն 875 հազար լարի: Դա մեր մունիցիպալիտետի համար բավականին մեծ գումար է: Ցանկանում եմ ընդգծել, որ մրցույթներից տնտեսված 230 հազար լարիով նոր նախագծեր են իրականացվելու, այնպիսին, ինչպիսին է քաղաքի մանկապարտեզի վերանորոգումը, դրենաժային համակարգի կարգավորումը եւ այլն:

- Գյուղատնտեսության եւ արտադրության զարգացման տեսանկյունից՝ ինչպիսի՞ն է իրավիճակը ձեր մունիցիպալիտետում:

- Կաթի արտադրությունը բավականին բարձր մակարդակի վրա է, սակայն իրացման տեսանկյունից որոշակի հիմնախնդիրներ են ծագել: Օրինակ, մեծ քանակությամբ պանիր է մնացել ավազաններում եւ չի վաճառվում, առկա է արտադրանքի իրացման հիմնախնդիրը:

Ինչ վերաբերում է բերքին, ապա այս տարի բավականին հարուստ բերք կունենանք, չնայած նրան, որ անձրեւային եղանակներ են:

- Որքանո՞վ է արդյունավետ ինքնակառավարման այն մոդելը, որը ներկայումս գործում է: Դա թո՞ւյլ է տալիս, արդյոք, որոշումներ ընդունել կենտրոնից անկախ:

- Փաստորեն, հարցերը քննարկում ենք սակրեբուլոյի հետ միասին, որից հետո՝ տեղի է ունենում որոշման ընդունումը: Ես դրական եմ գնահատում կառավարման այս մոդելը եւ գտնում եմ, որ ինքնակառավարման գործող օրենսգիրքն առաջընթաց քայլ է: Միայն ինչ արժե այն, որ վարչության նախագահն անմիջականորեն է ընտրվել, ինչը որոշակիորեն ավելի պատասխանատվություն է վերապահում:

- Վարչության նախագահ ընտրվելուց հետո արդեն մեկ տարի է անցել: Կարողացե՞լ եք, արդյոք, այդ ժամանակահատվածում կատարել այն ամենը, ինչ ծրագրել էիք, եւ եթե՝ ոչ, ապա որոնք էին արգելակիչ պատճառները կամ պայմանները:

- Նշեմ, որ ես 2005-2013 թվականներին զբաղեցնում էի Հանրային ռեեստրի ազգային գործակալության Նինոծմինդայի գրանցման ծառայության պետի պաշտոնը: Նինոծմինդայի վարչության նախագահի պարտականություններն ստանձնելու ժամանակ մեր բյուջեի եկամտային հատվածը 650 հազար լարի էր: 2013 թվականին վարչության նախագահի պաշտոնակատար էի, իսկ ընտրություններից հետո դարձա նախագահ: 2013 թվականի բյուջեի կատարումը կազմեց 1 միլիոն 850 հազար լարի: 2014 թվականին մեր բյուջեի եկամտային մասը ավելացավ 150 հազար լարիով եւ կազմեց 800 հազար լարի: Ելնելով դրանից, շատ բան կարողացանք անել եւ ներկայումս էլ անում ենք: Միակ ամենասուր հիմնախնդիրը Նինոծմինդա քաղաքում առ այսօր խմելու ջրի չկարգավորված համակարգն ու գյուղամիջյան եւ քաղաքի ճանապարհների վատթար վիճակն է:

- Ձեզ որոշակի ուժեր, մասնավորապես, «Վրացական առաքելություն» եւ «Նոր իրականություն» շարժումը մեղադրանք են ներկայացնում, որ Նինոծմինդայի մունիցիպալիտետում շատ անօրինականություններ են կատարվում ձեր եւ ձեր մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի կողմից: Նրանց խոսքերով, ենթակառույցային նախագծերը լրիվությամբ չեն իրականացվում, օրինակ՝ կոյուղու համակարգի վերականգնումը: Ի՞նչ կպատասխանեիք նրանց:

- Այս խմբերը, նկատի ունեմ Գիա Կորկոտաշվիլուն եւ Մերաբ Շաթիրիշվիլուն, կեղտոտ մեթոդներով ձգտում են զրպարտել ինձ: Նրանց կողմից 300 լարիով վարձակալված չարախոսները եկան Նինոծմինդա եւ զրպարտություններ են տարածում, նշում են, եթե ցանկանում եք, որ կանգ առնենք՝ վճարեք 50 հազար դոլար: Հայտարարում եմ, որ դրանց ետեւում կանգնած են Մերաբ Շաթիրիշվիլին եւ Գիա Կորկոտաշվիլին եւ, չգիտեմ էլի ովքեր: Ազգերը չեմ հիշում, թե ովքեր են՝ չի հետաքրքրում: Գիտեմ, որ 300 լարիանոց մարդիկ զրպարտություններ են տարածում, նաեւ՝ գիտենք, թե Նինոծմինդայից ով է լրացուցիչ «տեղեկություններ» հանձնում, այսպես կոչված, գրող Շաթիրիշվիլուն եւ նրա խմբին: Նրանք սնանկացած տարրեր են եւ ոչ միայն Նինոծմինդայի բնակիչների, այլեւ Վրաստանի մյուս տարածաշրջաններում եւ մայրաքաղաքում էլ ոչ մի աջակցություն չունեն: Երբ եկել էին Նինոծմինդա, կարողացան հավաքել ընդամենը երեք տասնյակ մարդու: Մեր ընդդիմախոսները հայտարարում են, որ ենթակառույցային նախագծերից ոչինչ չի արվում: Հապա ի՞նչ թվարկեցի հարցազրույցի մեկնարկին, դա ի՞նչ է: Ինչ վերաբերում է Նինոծմինդայի կոյուղու հարցին, ապա հայտարարված մրցույթում 2014 թվականին հաղթեց Թբիլիսիում հիմնված «Լոջիստիկա» ՍՊԸ-ն եւ այն կատարեց ստանձնած պարտավորություններն ու աշխատանքները: Ներկայումս այդ ընկերությանը մրցույթով փոխարինել է տեղական ընկերությունը: Այն, որ Նինոծմինդայի այս տարվա բյուջեն 6 միլիոն լարի է, որը անվերապահորեն կկատարվի, մեր թիմի համատեղ ձեռքբերումն է: Եթե ցանկանում եք, ստուգեք, ամեն ինչ գրանցված է:

Ինչ վերաբերում է մեր պատգամավոր պարոն Հենզել Մկոյանին, որը դեռեւս Շեւարդնաձեի ժամանակներից Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր է: Բնակչության շրջանում մեծ հեղինակություն ունի եւ պատահական չէ, որ մարդիկ անընդմեջ չորրորդ անգամ նրան ընտրում են մեծամասնական պատգամավոր: Առաջին անգամ Մկոյանը պատգամավոր ընտրվեց 1999 թվականին՝ լինելով Շեւարդնաձեի ընդդիմությունը, իսկ 2008 թվականի ընտրություններում հանդես եկավ որպես անկախ պատգամավոր: Մեզանում չկա կարիքավոր այնպիսի մարդ, որին նա չի օգնել՝ ալյուրով, վառելանյութով կամ այլ միջոցներով: Նա ուղղակի համեստ մարդ է եւ չի սիրում բարձրաձայնել՝ այս եմ արել, այն եմ արել: Ինչպես եք կարծում, եթե պարոն Հենզել Մկոյանը մեծ հեղինակություն չվայելեր, ինչպես կարող էր խորհրդարանական վերջին ընտրություններում արժանանալ Նինոծմինդայի բնակչության 80 տոկոսից ավելի ընտրողների աջակցությանը:

- Որքանով տեղեկացված ենք, հունիսի 13-ին Թբիլիսիում տեղի ունեցած տարերային աղետից տուժյալների համար մունիցիպալիտետներում բավականին մեծ գումար հավաքվեց եւ փոխանցվեց: Ձեր կողմից հավաքվեց մոտ 22 հազար լարի: Ինչպե՞ս իրականացվեց այդ գումարի հանգանակումը:

- Սկզբում փոխանցեցինք 22618 լարի եւ, ապա՝ լրացուցիչ սակրեբուլոյի աշխատակիցների աշխատավարձից հանգանակեցինք գումարներ եւ վերոնշյալ գումարը հասավ 25 հազար լարիի: Հանգանակումը իրականացվեց ընդամենը երեք օրում: Դա մեր մեծամասնական պատգամավորի, իմ եւ սակրեբուլոյի նախագահի նախաձեռնությունն էր: Եթե մեզ չվստահեին, ինչպես կկարողանայինք իրականացնել այդ գումարի հանգանակումը, այն էլ՝ երեք օրում: Այնպես որ, մինչեւ ինչ-որ հարցում մեղադրելը, թող պարզեն, թե ով ենք, ինչ ենք անում եւ, ինչ աջակցությունից ենք օգտվում Նինոծմինդայի մունիցիպալիտետում: Այսպես, իմիջայլոց, մեղադրանքներ չի կարելի ներկայացնել մարդկանց: Զգուշացնում եմ չարախոսներին, եթե առանց փաստերի ներկայացման առաջիկայում շարունակեն մեր դեմ մեղադրանքների առաջադրումը, արձագանքը կլինի համապատասխան:

ՆԱԹԻԱ ՄԵԼԻՔԻՋԵ